



ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ (0312) 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0312) 50622

Email: nadia@asparez.am; <http://www.asparez.am> <http://www.publicdata.am>

Հաստատված ծրագրի շրջանակներում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախաձեռնած դատական գործերի մասին

Ակումբը դատական գործերը նախաձեռնում, հայցերով դատարան է դիմում այն համայնքապետերի դեմ, որոնք խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները, չեն պատասխանում ԺԱԱ տեղեկության հարցումներին եւ/կամ չեն տրամադրում հարցված տեղեկությունները:

Դատական գործերի իրավիճակը 2018 թ. օգոստոսի 31-ի դրությամբ

2017 թ. ՏԻՄ թափանցիկության մշտադիտարկման համար տեղեկության հարցումներին չպատասխանած 10 համայնքների ղեկավարների դեմ վարչական դատարաններ հայց ներկայացնելու համար մշակվել են տիպային հայցադիմումները:

2018 թվականի հունիսի 29-ին կայացել է ԺԱԱ իրավախորհրդատու Արինա Մեծոյանն ընդդեմ Հարթագյուղ համայնքի ղեկավարի գործով նախնական դատական նիստ: Հարթագյուղ համայնքի ղեկավարը 29.08.2018 թվականին տրամադրել է պահանջվող տեղեկությունները, պարտավորվել է նաեւ պետտուրքը եւ տրանսպորտային ծախսը եւս հատուցել:

Կոչ համայնքի ղեկավարի դեմ ներկայացված գործով վճիռը տրամադրվել է դատարանին՝ երկրորդ կնիք դնելու համար, ինչով կհաստատվի, որ վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, եւ, որ այն մտել է օրինական ուժի մեջ: Դիմում է ներկայացվել դատարան վճիռը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ուղարկելու եւ կատարողական թերթ տրամադրելու համար: 2018 թվականի մայիսի 29-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Արագածոտնի մարզային բաժնի հարկադիր կատարող արդարադատության ավագ լեյտենանտ Բենիամին Մանուկյանը կայացրել է կատարողական վարույթ հարուցելու եւ պարտապանին որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու կամ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու մասին որոշում: 2018 թվականի հուլիսին Մանուկյանը գտնվել է արձակուրդում: 2018 թվականի օգոստոսի 29-ին ԺԱԱ իրավախորհրդատուն եւս մեկ անգամ փորձել է հեռախոսազանգի միջոցով խոսել Մանուկյանի հետ, սակայն ապարդյուն, քանի որ նա առողջական խնդիրների պատճառով աշխատանքի չի գնում, ԺԱԱ իրավախորհրդատուն փորձել է ստանալ պարզաբանում բաժնի պետ, արդարադատության գնդապետ Հ.Աբազյանից, ով հայտնել է, որ իրենք աշխատանքներ են իրականացնում վճիռը կատարելու համար, սակայն տեղեկատվության հարցման որոշ հարցերի պատասխանները չեն գտնում, Մեծոյանը տվել է անձնական բջջային հեռախոսահամարը՝ ասել, որ Մանուկյանը աշխատանքի գալուն պես զանգի՝ աշխատանքը արագ կազմակերպելու համար: